

ՎԱՀԷ ԾՇԱԿԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐՈՒՇ

(Սիրիա, Հալեպ)

Սփիւռքը իր ամենէն կազմակերպուած եւ զօրաւոր գաղութներուն մէջ իսկ չկրցաւ ծնիլ արուեստով եւ գրականութեամբ յագեցած այն մթնոլորտը, որ յատուկ էր նախ-աղետեան շրջանի Պոլսոյ: Այդ մթնոլորտէն ծնունդ առին եւ անով աճեցան տարբեր սերունդները մեր գրականութեան:

Աղետէն ետքի սերունդը մշակեց յուշ ու երազի գրականութիւն մը, մընաց ինքնամփոփ: Յաջորդ սերունդը՝ ինկած հայկականի եւ համաշխարհայինի հանգուցին, բացուեցաւ օտար մշակոյթներու, իր մորթին վրայ կրեց անոր ցաւոտ համարները եւ փորձեց անով պատուաստել թմբիրի մէջ ապրող ժողովուրդը: Այս վիճակին արդիւնք որպէս, մենք ունեցանք բացառիկ տաղանդներ, որոնք չկրցան սակայն շարժում ստեղծել, այլ մնացին մեկ գրականութեան մէջ ճառագայթող անուններ միայն:

Անոնց գրականութիւնը բացառիկ եւ հզօր ճիգով մը շրջանցեց հայութիւնը եւ փորձեց տալ աւելին. «Հայ ըլլալու համար, պէտք է հայէն աւելին ըլլալ», — կ'ըսէ Օշական, իր տիպարներէն Նոյեմի բերնով — («Փախստականը» հատորէն «Ժամագրութիւնը» պատմութեամբ):

Օշականի կենսագրութիւնը ցոյց կուտայ, որ ինք կրցած է ըլլալ աւելին հայէն, այն պարզ պատճառով, որ իր կեանքը չէ արմատացած սոսկ գաղութի մը հողերուն մէջ: Օշական հայ էր իր հօրով եւ գրականութեամբ, եւ հետո էր հայկական դաղութներուն բոլոր ժխտական յատկանիշներէն:

Ութ հատորները իր գրականութեան կը գծեն ճանապարհը, դոր կտրած է այս մարդը. իսկ նոյնքան ու թերեւս աւելի հատորներ կազմող իր ցրուած յօդուածները կրնան մանրամասնութիւններ տալ այդ ճանապարհի մասին: Հակառակ իր բեղուն կեանքին եւ մտաւորականի բազում դրսեւորումներուն — բանաստեղծ, արձակագիր, քրոնիկագիր, հրապարակագիր — Օշական անժանօթ կը մնայ ժողովուրդի լայն խաւերուն. իսկ բախտաւոր պարագային, երբ մարդիկ լսած ըլլան իր մասին, չեն կրնար ճշգրտօրէն որոշել իր տեղը սփիւռքի արդի գրականութեան մէջ:

Օշական սկիզբէն իսկ կրցաւ տարբեր հասկացողութիւն եւ խորք տալ գրող-մտաւորականի տիպարին. մինչեւ այդ, գրող կը համարուէր ան, որ օրաթերթի մը էջերուն ամէն օր կ'երեւար, կը թարգմանէր ժողովուրդին ցաւերն ու յոյսերը եւ բախտաւոր պարագային քանի մը անուն գիրք կ'ունենար. կոնակին, կեանքին վերջաւորութեան: Օշական սապէս կը սահմանէ այդ տիպարը՝ նոր ժամանակներու նոր գրողը. «Մտաւորականը թէ՛ ստեղծումի, թէ՛ դատումի եւ թէ՛ ալ ընկերային պարտաւորութեանց ու պայքարներու հանգուցն է» (Բագին, 1963, Եւրոպական ու Ամերիկեան Արդի Գրականութիւն):

Իսկ Գրիգոր Շահինեան այսպէս կը սահմանէ Վահէ Օշական-մտաւորականը, որ ինքնին սահմանում մըն է մտաւորական հասկացողութեան. «Ամբողջ էութեամբ մտաւորական, այսինքն ոչ միայն մտաւոր կեանքով ապրող անհատ, այլեւ սեփական գոյութիւնը իր որդեգրած խոհերով առաջնորդող մարդ...» («Թակարդին շուրջ» հատորին առիթով. Ասպարէզ շաբաթօրեայ, 4 օգոստոս 1990):

Թերեւս իր նորագոյն յօդուածաշարքը «Յոբելեանի մը առիթով»-ն է, ուր Օշական կը ներկայացնէ իր յիսուն տարուան վաստակն ու այդ յիսուն տարիներուն վրայ երկարող սփիւռքը. «Հաւագոյն արդիւնքը, որ յոբելեար մը

կրնայ ակնկալել այդ պատրուակէն մշակութային ականդութեան մը, ոգեկան խարխախներու ստեղծումն է ժողովուրդի գիտակցութեան մէջ, շնորհիւ յետադարձ ակնարկին, որ մարդիկ կը նետեն դէպի ազգային անցեալը: Յանկարծ երեւան կուգայ իրենց համար թէ Սփիւռքը առնուազն կէս դարու անցեալ ունի, թէ անոր գրականութիւնը սերունդներ եւ շրջաններ կը հաշուէ, եւ թէ գալիք ժամանակները եւ XX1 դարը յուսահատութեան եւ անորոշութեան վայրեր չեն անպայման այլ, անցեալին նման, ատոնք ալ կրնան հայ մշակոյթն ապրեցնել: Այդ յօդուածաշարին մէջ Օշական կը փորձէ նաեւ լուսաբանել, վերլուծել ու քննարկել իր երկերը: Մարդու միտքը ակամայ կ'երթայ հայոց Օշականին, որ «Համապատկեր հայ գրականութեան» հսկայածաւալ աշխատանքին վերջին՝ տասներորդ հատորը նուիրած է Յակոբ Օշականին: Ի՞նչ բանն էր, որ կը մղէր Յակոբ Օշականի նման մեծ մտաւորական մը գրելու իր մասին: Այսօր ահա նոյնը կ'ընէ-թէ եւ անհամեմատելի շափով—որդէն՝ Վահէ Օշականը: Հաւանաբար վախն է, որ գալիք սերունդը երէ ուղէ ծանոթանալ իրենց եւ բանայ ոչ թէ իրենց դիրքերը, այլ իրենց մտքին ըստեւ: զրուածը, դժբախտաբար այդ սերունդը գրականէն աւելի ժխտական բան տատի գտնէ իրենց մասին գրուած: Ու եթէ ընդունինք, որ պատմութիւնը մեղի փոխանցուածն է գիրին միջոցով եւ շմոռանանք որ այդ պատմութիւնը յաճախ սուտ է—եղածը ուրիշ, գրուածը՝ շատ ուրիշ—կրնանք մասամբ հասկնալ հայր եւ որդի Օշականները մտահոգող եւ գիրենք իրենց մասին դիւրեւ մղու ազդեակները:

Օշական առաջին սփիւռքահայ մտաւորականն էր, որ վեր կ'երաւ սփիւռքի օրը-օրին գոյութենէն, դիտեց քիթէն անդին, փորձեց սահմանել սփիւռքը, սփիւռքի ժամանակը եւ այդ ժամանակին մէջ բռնուած սփիւռքահայը: Տակաւին, Օշական այն քիչերէն է, որ շտարուեցաւ Հայաստան-Սփիւռք իրանդանվառութեամբ—եւ աւելի առաջ՝ աքլորակոխովով, այլ պահեց իր ուղիւս դատողութիւնը, զգաստացուց ժողովուրդը եւ փորձեց բանալ մութ ծալքերը: «Յոբելեանի մը առիթով» յօդուածին Ա. բաժնին մէջ կ'ըսէ. «Ժամանակն է, որ արթննայ սփիւռքը ու գիտակցի ինչ շարաշահութեան զոհ է'երթալ յաճախ երբ հայրենիքի անսպառ-(անսպառ)-վարկին կռթնած՝ հայրենասէրներն հասարակ օթեկ ֆոթլորը մեզ կը հրամցնեն ու կ'արժանան մեծ գովեստի: Ով գիտէ ինչքան ծածուկ հեգնանք կ'ընկերանայ այդ ներկայացումներուն: Ինչ գիտէ. կ'ուզէ, որ մենք ալ գիտնանք. կ'ուզէ, որ մենք ի վերջոյ դիտնանք նա'եւ մենք զմեզ: Ֆրանսահայ քանի մը մտաւորականներ, նոյնքան պայծառատես, չկրցան շիտակէ շիտակ ասիկա ըսել մեզի: Անոնք տրուեցան իրենց մտաւորական աշխատանքին, յաճախ անտեսելով նոյնիսկ անոնք, որոնք իրենց հասնելու եւ գիրենք հասկնալու ճիգ կը թափէին:

Վահէ Օշական իր յստակութեան հետ ունի նաեւ յանդգնութեան այն դեղաշափը՝ տաղածը, որ կը ցնցէ, արթնցնելու համար: Ի գուր չէ որ շատեր կ'ընդունին զինք որպէս մեծ մտաւորական, սակայն վերապահ են գրող-բանաստեղծ-արձակագիրին հանդէպ: Սակայն լուրջ ուսումնասիրութիւնը մեզ կը տանի այն համոզումին, որ սահմաններ չկան մարդ-մտաւորականի շնորհ Օշականներուն միջեւ: Ի՞նչ որ գրուած է—կ'ըսէ Օշական իր գործին առնչութեամբ հարցազրոյցի մը ընթացքին—(էյմ, յուլիս 1991)—շարունակական հոգեվիճակի մը պատկերն է: Ոեւէ պահու իմ միտքն ու ջիղերը Ռիխթերի աստիճանով 8 ուժգնութեամբ կը բանին...»:

Ի՞նչ որ հրապարակագիր Օշականը կը ներկայացնէ հանրութեան, մտաւորական Օշականին էութեան մէջ եփած է ու յաճախ բանաստեղծին երկերուն մէջ կը դրսեւորուի: «Կարելի' է իր գրածը բանաստեղծութիւն համարել»,—հարց կուտան շատեր, ակնարկելով իր անյանգ, անշափ, արձակունակ քերթուածներուն: Յարութիւն Պէրպէրեան իր երկրորդ քերթողագիրքին՝ «Ոսպնեակին»—1984 Պէյրութ—սկիզբը «Քանի մը արագ նօթեր բանաստեղծութեան լուսանցքին» գրութեան մէջ կ'ըսէ. «Ի՞նչ ընել բանաստեղծութիւն մը, որ արտասանուելու կամ նման նպատակի մը համար չէ գրուած: ...Ո՞րը

պէտք է զետեղել այն բանաստեղծութիւնը, որ արձակով ստեղծագործուած է: Ինտրայի «ներաշխարհ»էն մինչեւ Սիկողոս Սարաֆեանի «Վէնսէնի անտառը» յստակ աւանդութիւն մը ունի արեւմտահայերէնով երկնուած գրականութիւնը, զոր կարելի չէ անտեսել: Ուրեմն՝ յաւելեալ պատճառ մը եւս բանաստեղծութիւնը փնտռելու յանգերու եւ շարժելու շրջապատուողն դուրս:

Ինչ որ Յ. Պէրպէրեան կը գրէ «Ոսպնեակին» սկիզբը, ինքզինք բացատրելու ճիգով, կը գրէ նաեւ որպէս ընդհանրութիւն արդի բանաստեղծութեան. «...հարցը առնչութիւններու ծանօթ պատկերացումին մէջ չի սահմանափակուիր, ոչ ալ քաջածէ անպայման, սակայն կ'երթայ այդ պատկերներուն պատահականներէն անդին, կը վերածուի հոգեբանական փորձառութիւնը եւ շրջապատի հետ յարաբերութիւնը հասկնալու ճիգի-նիւթին հետ որոշ առարկայական հեռաւորութեամբ մը՝ այնքան որ կարելի է»:

«Քաղաք»—(1963 Պէյրութ)—գիրքին առիթով—(երկրորդը Օշականի բանաստեղծական հատորներուն)—Գր. Շահինեան «Բագինի» մէջ կը գծէր «Դիմաստներ Վահէ Օշականի» եւ կ'ըսէր. «Ժամանակն է թերեւ, երկու անգամ հատորներու եւ բազմաթիւ յօդուածներու տասնհինգամեայ հեռաւորութենէն քննելու Վ. Օշականի ստեղծագործութիւնը, ընկալումի փորձ ընելու եւ դատումի խօսք ըսելու»:

Աւելի քան երեսուն տարի ետք, Վ. Օշականի անունին առջեւ դիմաստներ մը չէ, որ կը յառնէ մեր միտքին մէջ, այլ դէմքը յստակատես, պայծառամիտ եւ միշտ երիտասարդ մտաւորականի մը, որ մնաց հաւատարիմ ինքզինքին, իր խօսքին եւ իր մտաւորականութեան: Իր յիսնամեայ վաստակը, իր իսկ խօսքերով, կը դարձնէ զինք խիստ աշխարհի պահակը, վկան, դատապարտուած տոկալով՝ յայտնատեսութեան ու մանաւանդ յստակատեսութեան գերին»:

Վ. Օշական գրականութիւն կը մտնէր 1944ին, «Պիրատէր Յակոբ» պատմութեամբ, «Յուսարբերի» գրական յաւելածին մէջ, լոյս տեսած Գահիրէ: Բայց սփիւթի լուսարձակները իր վրայ կը կեդրոնանային 1956ին, իր առաջին քերթողագիրքին՝ «Պատուհանին» հրատարակութեամբ:

1946—1951, հինգ տարիներ Օշական Փարիզ է, որպէս գրականութեան ուսանող, Նորպոնի համալսարանը. շրջան մը, երբ համաշխարհային Բ պատերազմին հետեւանքները նոր սկսան իրենց անդրադարձը ունենալ մարդոց եւ մշակոյթներուն վրայ. «Աշխարհը կը փոխուէր սինեմայի տեսարաններու արագութեամբ ու նոր ժամանակներու համար նոր մարդիկ պէտք էին, նոր արուեստով»,—կ'ըսէ Օշական «Նորպոնի» եւ Ամերիկեան արդի գրականութիւնը» ծաւալուն յօդուածաշարքին մէջ (Բագին, 1963):

Իր ուսանողական տարիներուն Օշական ականատես եղաւ աշխարհի փոփոխութեան. իր ոսպնեակը կրկնակի տարողութիւն ունէր՝ ինք մէջն էր այդ ամբողջին, որպէս մարդ, նետուած ահաւոր ժամանակի մը երախը, բայց չափաւ դուրս էր անկէ, որովհետեւ հայ էր Փարիզի մէջ. ներսը օգնեց իրեն ապրիլ եւ զգալ բացառիկ շրջանի մը դէպքերը, յայտնատեսութեան եւ շլացուցիչ լուսաւորութեան լուսարձակներուն տակ:

1963ին լոյս կը տեսնէր «Քաղաք»ը, Օշականի երկրորդ քերթողագիրքը, որուն մէջ յստակօրէն դրսեւորուած է կեանքի անհեթեթութեան անդհանքը. ելեւէջ մըն է իբր իր ներաշխարհին եւ կեանքի իրականութեան. երեւոյթներն ու դէպքերը կը լարեն զինք, կը պրկեն հարցադրումներու ցանցը իր շուրջ, կը զգանք որ կը տուալտի, կը տագնապի, բայց կը զանէ ելք, ժամանակին պարտագրած, բայց մարդուն այդ ժամանակէն վեր կենալու կարելիութիւնը ընծայող միակ ելքը:

Մարդանալու պահն է այդ
մեծղի Այո-ն որ կը խուժէ քեզմէ դուրս
երբ տոմսակը կը պատռես,
ու հետիոտն, միս-միսակ՝
որեւէ տեղ կը քալես:

Ահա Օշականի ժամանակը՝ քսաներորդ դարը, ահաուր ժխորով, որ պարպուող ամբարտակի մը—մշակութիւն—ծայնը կ'ուզէ ծածկել, մարդոցմով, որոնք մոռցեր են թէ ի՞նչ ըսել է մարդ ըլլալ, կը փնտռեն զիրար, բայց հազիւ գտած կը փախեն սարսափաւար, դէպի իրենց առանձնութիւնը, դէպի իրենց նախկին վիճակը, դժգոհ, ցանցուած եւ անկարող: Արուեստագէտը ինքն է որ պիտի որոնէ ելքը, զուխը զարնէ պատին ու գտնէ անցքը, որ, Օշականի պարագային, մարդուն գիտակցութիւնն է իր վիճակին, Մարդուն գերագոյն ողբերգութիւնը անկատար ըլլալու գիտակցութիւնն է եւ յատուկապէս ըլլալու անկարողութիւնը. բայց նիշդ այդտեղ է մարդուն հերոսութիւնը՝ որ գիտակցութիւնը կը վերածէ ոյժի, Սիգիփոսը ետ վեր՝ գազաթ տանող ձրգառով:

1945—1955 տասնամեակն էր, որ իր դրոշմը դրաւ ոչ միայն Սորպոնի ուսանողին, այլ եւ մտաւորականին, որ սկսեր էր հասուննալ Օշականին մէջ:

Վահէ Օշական գրականութեան կուգար այնպիսի շրջանի մը, երբ արեւմտամշակութեան գրականութեան բոլոր ուղիները ալ փակուած կը նկատուէին եւ բոլոր ճիգերը ամուլ դարձեր էին միջակութեան ախտով: Կարօտի երգերը երգուեր վերջացեր էին, նահանջի դրօշը բարձրացուեր էր ու հիմա կարծէք պարապ հրապարակին վրայ կախուեր մնացեր էր միս մինակը, անձրեւէն ու փոշիէն հիւծած: Արամ Հայկազ գրեր էր Յեղին Չայնը—1949—1954—Համաստեղ գծեր էր իւր Գիւղը եւ Անձրեւը—1924, 1929—Մուշեղ Իշխան երգեր էր, Անդրանիկ Մառութեանին հետ, երգը որբերուն եւ մանկութիւն շունեցող մարդոց ու Շահան Շահնուր Նահանջը երգով հնչեցնելէ ետք—1929, կը սպասէր:

Օշական բացաւ իր «Պատուհան»ը եւ, ինչպէս Գրիգոր Պըլտեան կ'ըսէ յորեկեանի հանդիսութեան իր խօսքին մէջ, «տեղ մը, կարծէք ճեղքէ մը ներս բաց հովն էր որ կը մտնէր, շրջափակի երբեմն, ցուրտ, բիրտ ու կատաղի, երբեմն ձախաւեր, բայց բոլոր թանգարանի մոմիաներուն կուտար իրենց իսկական անունը»:

Ահա Օշականի ժամանակը՝ քանդուած քաղաքակրթութիւն մը, միջազգային խաշմերուկին վրայ եւ անելներով շրջապատուած սեփական մշակութիւն մը:

«Պատուհան» ի վեր, մեր գրականութիւնը մտաւ տաքնապի մը մէջ, թէ ի՞նչ է բանաստեղծութիւնը: «Ոչ մէկ կապ աւանդական բանաստեղծութեան կաղապարներուն եւ թեմաներուն հետ»,—կ'ըսէ Գրիգոր Պըլտեան:

Բանաստեղծ Օշականի երեւումով—«Պատուհան», 1956—յստակ բանաձեւում գտաւ բանաստեղծական տաքնապը. ա. ի՞նչ է բանաստեղծութիւնը, բ. բանաստեղծութիւնն է Վահէ Օշականի քերթողութիւնը:

Թերեւս շատ աւելի դիւրին ըլլայ ճշդել թէ ինչ չէ բանաստեղծութիւնը, կամ՝ ինչը բանաստեղծութիւնն չէ: Երբ բանաստեղծութիւն կ'ըսենք, ամենէն առաջ կը պատկերացնենք գրութիւն մը, համեմատաբար կարճ ծաւալի, որ ունի շափ, յանդ եւ կշռոյթ: Սակայն յաճախ կը հանդիպինք բանաստեղծութիւններու, որոնք շունչնալով հանդերձ յիշեալ պայմաններէն ոչ մէկը, կը համարուին վաւերական բանաստեղծութիւն, մանաւանդ այսօր, երբ գարուն սկիզբը ծնունդ առած եւ ժամանակին հետ աւելի ու աւելի ըմբոստ նկարագիր հազնող գրականութիւնն ու բանաստեղծութիւնը ամբողջովին կ'անտեսեն շափի, յանգի եւ կշռոյթի կանոնները: Արձակ բանաստեղծութիւն, սպիտակ բանաստեղծութիւն, ազատ յանգ կամ շարժական շափ գրական հրապարակ նետուած արդի պիտակներ են, որոնք սակայն ոչինչ կը բացատրեն, եւ չեն կրնար պատասխանել ի՞նչ է ուրեմն արդի բանաստեղծութիւնը հարցումին:

Գրական շրջաններ—(միջնադար, դասական, ռոմանթիկ, վիպապաշտ եւ այլն)—իրենց կանոնները կը պարտագրեն. սակայն չի կրնար վէճ ըլլալ այն իրողութեան շուրջ, թէ իսկական տաղանդներ, անոնք են, որոնք կը պատռեն կանոններու մաշկը եւ իսկական ճառագայթումով կը փայլին: Գր. Պըլտեան

բանաստեղծական իսկական արարք կը նկատէ կաղապարները քանդելու յանդգնութիւնը: Այս դիտանկիւնով իսկական բանաստեղծ է Վ. Օշական, որովհետեւ իր գործին ամբողջութիւնը հերքումն է մինչեւ օրս ըսողունուած եւ ընկալուած գրական ամանդութիւններուն: Սակայն քանդելու յանդգնութիւնը միայն կը բաւէ՝ գործ մը բանաստեղծութիւն նկատելու: անշուշտ, ոչ: Թերեւս, եւ ասիկա փորձ մըն է լոկ, բանաստեղծութիւնը այն է, որ իր մէջ կամփոփէ ու կը խտացնէ յանգի, շափի, կշռոյթի, պատկերներու եւ լեզուի բոլոր գեղեցիկութիւնները իսկական նորարարութեամբ: Սակայն արդի արուեստներուն եւ մանաւանդ գրականութեան մէջ, գեղեցկութիւնը առանելութիւն մը ըլլալէ աւելի, ծանրութիւն կը նկատուի, որովհետեւ, ինչպէս կ'ըսէ Վ. Օշական (Յուրոպական եւ ամերիկեան արդի գրականութիւնը, Բ, էջ 57). «Սրիկա է ան, որ կը գեղեցկացնէ մարդն ու իր ճակատագիրը, որ հաճոյքի կամ բարոյականի սիրոյն կը նահատակէ ճշմարտութիւնը, այսինքն այն՝ որ կը կազմէ մարդ արարածին զոյգ բնութիւնը՝ իրականութեան երջանիկ կամ տառապագին զոհը, բայց նաեւ գերիրականութեան հասնիլ Կորնոլ կիսաստուածոյ: Կը հասկնանք, որ Օշականի գլխաւոր մտասեւեռումը ճշմարտութիւնն է եւ գլխաւոր տաքնապը՝ մարդը, զոհն ու կիսաստուածը կ'եանքին:»

Սակայն կը մնայ դեռ հարցը. Բանաստեղծութիւնն է Օշականի քերթողութիւնը: Եթէ բանաստեղծութեան գլխաւոր յատկանիշը իր ձեւն է՝ շափ, յանգ եւ կշռոյթ, ապա Օշականի մօտ ոչ միայն յարգուած շեն ասոնք, այլ նոյնիսկ ունեւորութիւն ըրած եւ քերթուածներուն մէջ ամբողջական արձակ հատուածներ գետեղած է: Ասիկա արձակ բանաստեղծութիւնը չէ, այլ պատումի արձակը, ինչպէս օրինակ «Ժամադրութիւն թուրքին հետ» («Պատուհան», էջ 15) եւ կամ «Արուարձաններ» գրքին քերթուածադիրքին «Կեանքէն մահ» բաժինին 6-րդ էջը, այս գիրքը էջաթիւեր չունի եւ թերթերը տպուած են մէկ երեսի վրայ. կը կարծեմ թէ ասոնք պատահական ձեւեր չեն, այլ խորհրդանշաններ, որոնց յետոյ պիտի անդրադառնանք: Այստեղէն, այսինքն արձակը բանաստեղծութեան մէջ ներառնելու իր փորձէն է, որ կը սկսի բանաստեղծութեան տաքնապը: Մարդ կը մղուի մտածելու, թէ Օշական ինչու կ'ուզէ բանաստեղծութեամբ արտայայտել իր ըսելիքը, որ աւելի շատ փիլիսոփայական խորք կամ կենսահայեացք ունի, գեղեցիկ ապրումներու եւ բառերու հոսք մը ըլլալէ աւելի: Անոնք որոնք փորձած են իր բանաստեղծութիւնը վերլուծել, եւ շատ չէ անոնց թիւը՝ Գրիգոր Շահինեան, Կրիգոր Պրլտեան, Յարութիւն Պէրպէրյան, Մարկ Նշանեան, աւելի շատ խօսած են բանաստեղծութեան էութեան կանխահայտ հէնքին մասին, քան ձեւին: Բայց ի վերջոյ ձեւը չէ՝ թէն ոչ միակը, որ բանաստեղծութիւն մը բանաստեղծութիւն կ'ընէ:

«Օշական կը յարգէ բանաստեղծական հիմական տուեալը՝ տողի յղացքը» կ'ըսէ Գր. Պրլտեան (Յորեկեանական հանդիսութեան խօսք Ասպարէզ):

Օշականի տողերը կը հետեւին ներքին շափի մը, կը կապուին ընդհանուր գնացքով, որ քերթուածին կուտայ իր տինամիք ընթացքը:

1. երկու սանդուխ
վար կը վազեն:
Ու բառերուդ մատներէն
խարխաբելով վար իջայ:
Ու մատներէն իմաստներուս,
բան մը ինձմէ
ալ յուսահատ նոր էջքեր
ներս սահեցաւ:
Ու սպասեց
Ժամադրութեան:
Բայց ան չեկաւ:

կամ

2. Ու ես կ'ապրիմ

Ժխորին մէջ ափս բացեր շորս կողմերէն կը մուրամ
ինչ որ իյնայ ով կը գողնայ օր ցերեկով կը տանի
մեծ խնամքով կը տարածէ առանձնութեան արուար-
ձանը փողոց չկայ մայթ չկայ
բայց կը բուսնիմ կարօտներու տենչանքներու արան-
քէն լոյսը հետս բերելով:

Առաջինը առնուած է Օշականի առաջին գիրքէն, երկրորդը՝ վերջինէն: Յատակ է, որ սկիզբը քերթուածը կ'ընթանար ուղղահայեաց դիժով եւ տողերը իրար կը կապուէին ներքին ու արտաքին իմաստներով. յետոյ տողին շար-
ժումը դարձաւ հորիզոնական իւրաքանչիւր տող, ընդհանուր կառուցին մէջ
կը կապուի, ներքին, ենթագիտակցական մակարդակներու վրայ, նախորդին
եւ յաջորդին, բայց նաեւ ամբողջ է ու վերջացած ինքն իր մէջ:

Քերթուածին ձեւին աճանջումին, կամ քերթուածը հակաընկալեալ
ձեւով գրելու իր յամառութիւնը մաս կը կաղմէ եւ աւանդութիւններու դէմ
իր ըմբռնատաշտին, բոլոր տեսակի եւ ամէն ինչի մէջ, եւ ժամանակին հետ
ըլլալու, քաշեցորդ դարձ քրանոտորդ դարու ձեւով ապրելու, մտածելու եւ
արտայայտելու իր համոզումին: Կարելի չէ աստերու եւ ցաւերու այս ժա-
մանակին մասին գեղեցիկ բառերով եւ ժանեակաւոր զգացումներով խօսիլ ու
դրել:

Ի՞նչն է ուրեմն, որ իր քերթուածները աւելի ճելիօրէն կը դնէ բանաստեղ-
ծութիւն կոչուող տարածութեան մէջ-թէեւ շատ վիճելի է ասիկա. Պօղոս Սնա-
պեան.

— Մեծ մտաւորական է, այո, բայց բանաստեղծ... Ի՞նչ բանաստեղ-
ծութիւն է իր գրածը:

Երբորդ յատկաճիշդ իր քերթողութեան, կաղապարներ քանդելու իր յան-
դրգնութենէն եւ բանաստեղծական անձեւէն ետք, ցնցող պատկերներու իր
հոսքն է. պատկերները պատկերակազմումի սիրոյն կամ ընթերցողը ընցե-
լու սիրոյն չէ, որ հոն են. առնա՛ք քերթուածին մէջ իրենց հիմնական տեղը
եւ կարեւոր դերը ունին.

Այս իրիկուն ալ
արեւն իր լոյսը կը հաւաքէ մեր աչքերէն ու մորթէն,
վարձքով տրուած հին համազգեստի մը նման
ու կը մեկնի:

(Մայրամուտ, Ակօս, № 8, 1957):

կամ՝

Երբ առտուայ փայլուն ակռան, դեռ չխածած՝
Մէկ անդամէն կը փտտի:

(Պատուհան, էջ 56):

կամ՝

Քրտինքի մը հաստութեամբ
որ սիրահարները կը միացնէ
ու կը զատէ՝
Ներկան:

(Պատուհան, էջ 59):

կամ՝

Անմահութեան թակարդին մէջ ուր որ դառնամ հին ժանգոտած ճաղերն են

(Արուարձաններ, Կեանքին շուրջ, էջ 2):

Կը տեսնենք, որ պատկերները Օշականի մօտ դադրեր են պատկեր ըլլա-
լէ եւ դարձեր են քերթուածին էութեանական մէկ մասը: Օշական պատկեր
չստեղծեր, Օշական պատկեր կ'ապրի՝ անճիգ եւ հեղասպահ ձեւով, որ յատուկ

է միայն առոյգ, թարմ եւ ինքնուրոյն մտքի մը, որուն համար ամէն երեւոյթ հարցադրումի եւ կասկածի առիթ է:

Օշականի բանաստեղծութիւնը հասկնալու համար, պէտք է գիտակցել նախ, որ անորը կեանքին լուսապատկերը չէ, այլ այդ պատկերին նկարիչը, ուր ի յայտ կուգան պատկերին մէջ շտեմնուած կամ շրջանցուած կարեւոր մանրամասներ: Զուգահեռ մը կայ Օշականի բանաստեղծութեան եւ Ֆրանսիս Պէյքընի նկարչութեան մէջ, ուր խեղաթիւրուած բան չկայ, ինչպէս Բիքասոյի կամ Տալիի մօտ. սակայն ամէն բան ու մանաւանդ մարդը կ'երեւի իր զոյգ բնութիւններով՝ աստուածային եւ կենդանական: Մարդը գլխաւոր առանցքն է Օշականի գրականութեան՝ ե՛ւ արձակ, ե՛ւ բանաստեղծութիւն. տիեզերքի միւս երեւոյթները կը ծառայեն բացայայտելու զինք՝ մարդը, իր մարդ ըլլալու գիտակցութեան եւ կարելիութիւններուն մէջ յաւիտենապէս բանտուած: Իր առաջին քերթողագիրքէն իսկ յայտնի է ասիկա Օշականի համար.

Որովհետեւ մարդ էակը
միակ արժէքն է ամպերէն վար
ու մանաւանդ վեր:

Այս հիման վրայ է, որ որոշած էր իր ընելիքը եւ զայն բանաձեւած՝ պարզ ու մէկին.

Այս վայրկեան
մարդ մը առջիս՝
կը դիտեմ:
Ու մինչեւ վերջ
այդ ընեմ պիտի
հաւանաբար:

(Պատուհան, էջ 9):

Օշական կը զգայ հոյակապ նմանութիւնը մարդոց, սակայն իր բացառիկ գիտակցութեամբ կը տարբերի անոնցմէ.

Այս բոլորը
ու կեանքը ամբողջ
որ շխաբուեմ այլեւս
ես-ի մը պատրանքէն:
ու զայն փնտռեմ ինձմէ դուրս:

Այսպէս, որոշելէ ետք որ միակ արժէքը մարդն է և իր գլխաւոր մտահոգութիւնն է այդ մարդը, Օշական զայն կը դնէ երկու մեծ ու միակ ընտրութիւններու ճամբաբաժանին.

Կամ մարդ ըլլալ առանձին
ու շտապանուած՝ քայքայուիլ,

կամ՝

դեռ շարունակ քառսուն տարի
անտեսելով իր դիակը, որ կը նեխի:

Իր ամբողջ բանաստեղծութիւնը կը թափառի այս երկու հակադիր բեւեռներուն մէջ, ցուցադրելով ահաւոր տագնապն ու տառապանքը մարդուն, եւ մէկ, եւ միւս բեւեռին վրայ: Ուր ալ ըլլայ, առանձին ապրի թէ խմբովին, մարդը միշտ միեմակ է, լքուած ու թափառական, տիեզերքի անհունութեան մէջ:

Մնացեալները մանրամասնութիւններն են այս համոզումին, ուր մէկ եւ շատ կարեւոր կէտ եւս կայ՝ Օշականին մարդը նաեւ հայ մարդն է, որ իր ուներուն կը կրէ հայ մարդ ըլլալու կրկնակի ծանրութիւնը.

«Կարծես մարդ էակի գաղտնիքը չէր բաւեր, Հիմա հայ անունն ալ գաղտնիք մըն է, ու Բազմապատկուած... Բազմապատկուած...»:

(Պատուհան, էջ 17):

Այս հայ մարդը հայ ապրելու կողքին ունի գլխաւոր մտասեւեռում մը՝ թուրքը, որ տիպար ըլլալէ աւելի, գաղափար դարձած է, վերացարկուած, անորոշ:

«Զկրցանք ատել քեզ, թշնամին, որովհետեւ քու պատկերդ մեր գանկէն ներս աղօտ ու վերացական մնաց:

Եւ կուգայ ամէն պահու խցկուիլ սերունդներուն կեանքին մէջ:

Ալ որքան ատեն պիտի հանդուրժենք սա մեռելներուն, որ կ'արգիլեն մեր քայլերը: Աղատ ձգեցէք, որ ապրինք»:

(Պատուհան, էջ 18):

Վահճ Ծշականին ու մանաւանդ իր բանաստեղծութեան մասին շատ չէ գրուած. սակայն ինչ որ գրուած է, գրուած է ժամանակակից մեր լաւագոյն մտաւորականութեան կողմէ՝ Գր. Շահինեան, Գր. Պրլտեան, Մարկ Նշանեան, եւ գրուած է սպառիչ ձեւով: Վերլուծումի եւ որակաւորումի իրենց փորձով, այդ մտաւորականները խօսած են Օշականի բանաստեղծական հէնքին մասին, սակայն բնաւ, կամ գրեթէ բնաւ չեն անդրադարձած ձեւին, որ բանաստեղծութիւնը արձակէն զատորոշող եթէ ոչ միակ, ապա գլխաւոր ազդակն է:

Գր. Պրլտեան ծաւալուն յօդուածի մը մէջ «Վահճ Ծշական եւ ժամանակակից բանաստեղծութիւնը» (Յառաջ միտք եւ արուեստ, մարտ 5, 1995), տարբերակը խօսուած Օշականի յորեւեանին—Հոկտեմբեր, 1994, Լոս Անճէլէս—սպառիչ կերպով վերլուծելէ ետք այդ բանաստեղծութիւնը, անոր սկզբնական զսպանակներն ու հէնքը, կարծես ուզելով չքմեղացնել Օշականը ձեւի հանդէպ իր անփութութեան մէջ, կ'ըսէ. «Անհեթեթութեան մէջ, անոր հետ, եւ անոր ամենատիրութեան դէմ՝ գրողը ան է որ իմաստ մը կը փրցնէ, կը գտնէ ուղին գծին իմաստին: Ոչ երազանք, ոչ ալ փախուստ աշխարհէն, պատրանքներու յօրինում մը: Ահա թէ ինչու Օշական կը խուսափի բանաստեղծութեան պատկերէն ու նուագէն, բանաստեղծական միտքը կախարդող պաճուճանքէն»: Եւ նոյն յօդուածին մէջ կը շարունակէ, արտաքին ձեւը բացատրելու ճիգով:

«Ոճ ըսի՝ նկատի ունիմ այդ բաղադրեալ բարբառը՝ նախ՝ որ կ'անցնի խօսակցական լեզուէն գրականին, մեր շոր, անհամ ու տափակցած, ոտանաւորէն խեղճուած «մաքրութենէն մեռնող լեզուն պատուաստելով բանաւորի համով: Ասիկա պզտիկ գործ մը չէ, նոյնիսկ մեծ գործ մըն է, քանի ամէն գրող նախ եւ առաջ լեզուի բանուոր մըն է: Այդ ոճը ունի երկրորդ երեսակ մը, որ մօտեցումի կերպն է ատաղձին. Վ. Օշականի բանաստեղծութիւնը քնարական չէ, խօսելու համար գիրքերու լեզուով, ինչպէ՞ս կրնար քնարական ըլլալ, երբ խօսքը չի դար մտերմութենէ: Օշականի համար էականները մակերեսներ են, դիմակներ՝ ինչպէս մարդիկը մեր շուրջ, որոնք միշտ ալ պիտի յաւակնին՝ խորունկ են: Այդ քերթուածներուն մէջ հոգիի պահերու դրսեւորումներ չկան, որոնք խորունկի հոգեբանութեան, յիշողութեան ժամանակի, կորսուած մանկութեան վերերեւումներ են: Ասոր արդիւնքն է տեսակ մը իրապաշտութիւն, որ ոչ մէկ իրականութիւն կը վերաբարձրէ, քանի չի պատկերացներ, այլ միայն կը յուշէ: Ապա՝ վերջապէս, Վ. Օշականի տողը ինչ որ ալլուր կոչած եմ անկայուն տող, այն որ մեծատարած քաղաքին եւ անոր արուարձաններուն առջեւ եւ քալէ անդադար, բռնուած այդ ամբողջութիւնը պարփակելու տենդէն: Կը տանի իր հետ գրեթէ, երեւութական բայց կազմակերպուած անկարգութեան մը մէջ, ինչ որ կը գտնէ»:

Յետոյ, շատ կարեւոր հատուածի մը մէջ, Գր. Պրլտեան գրեթէ կը պատասխանէ մեր այն հարցին, զոր դրած էինք ամենէն սկիզբը ու կ'ըսէ. «Բանաստեղծութիւն՝ անկասկած, այն շափով ինչ շափով իբրեւ ստեղծում պահ

մը անկարելի կը դարձնէ բանաստեղծութեան ականդութիւնը, անոր տալով նորն ատեն ալիապէս ըլլալու հնարաւորութիւն: ...հնդրական դարձնելով ականդութիւնն ու տուեալը Վ. Օշական կը վերսկսի բանաստեղծութիւնը, ըսել կ'ուզեմ կ'ազատագրէ զայն բանաստեղծականի պատրանքէն: Այսինքն, որովհետեւ գրողը ինք կ'ըսէ, որ իր մեզի ներկայացուցած բանաստեղծութիւն է, կ'ընդունինք ներկայացուցածը իբր այդ, յարգելով արուեստագէտին ազատութեան իրաւունքը եւ քննարկելով զայն իբր բնաստեղծութիւն:

ПОЭЗИЯ ВАГЕ ОШАКАНА

МАРУШ (Сирия, Алеппо)

Р е з ю м е

Несмотря на свою плодотворную творческую деятельность, крупный поэт, прозаик, беллетрист и публицист Ваге Ошакан малоизвестен армянскому читателю. На протяжении более чем 50 лет В. Ошакан (первый поэтический сборник «Окно» был издан в 1956 г., второй—в 1963 г.) был первым западноармянским писателем, который, минуя повседневные проблемы западного армянства, попытался передать образ своего современника—западного армянина. В. Ошакан выработал свой оригинальный стиль в западноармянской литературе, своим исключительным талантом раздвинув рамки традиций, создав свою, новую поэтическую форму. Герой его поэзии—человек, его духовная и физическая сущность, его страдания, порожденные невозможностью полной реализации его как личности.